ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի հ. 34-Ն որոշման 1-ին կետով սահմանվել են Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարին կից հասարակական կարգով գործող խորհրդակցական խորհուրդների կազմավորման և գործունեության կարգը, լիազորությունները:

Սույնով Երևանի Էրեբունի վարչական շրջանը հրավիրում է հասարակական կազմակերպությունների, իրավաբանական անձանց միությունների, բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների ներկայացուցիչներին և Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի հ. 34-Ն որոշման հավելվածի 2-րդ կետում նշված բնագավառների համապատասխան մասնագետներին մասնակցել վերը նշված խորհրդակցական խորհրդի աշխատանքներին՝ դրանց կազմում ընդգրկվելու միջոցով:

Խորհրդի կազմում ընդգրկվելու (Երևանի Էրեբունի վարչական շրջանի ղեկավարի որոշմամբ նշանակվելու) համար դիմումներն անհրաժեշտ է ներկայացնել մինչև 2013 թվականի սեպտեմբերի 28-ը ներառյալ հետևյալ հասցեով՝ ք. Երևան, Սասունցի Դավթի փողոց 87 շենք I հարկ N 107 սենյակ:

Ընդ որում՝

ա) իրավաբանական անձինք դիմումին կից ներկայացնում են՝ իրավաբանական անձի գրանցման պետական ռեգիստրի վկայականի պատճենը և, եթե խորհրդակցական խորհրդի կազմում ցանկանում է ընդգրկվել իրավաբանական անձի գործադիր մարմինը (տնօրենը, գործադիր տնօրենը, կառավարիչը, նախագահը և այլն), ապա անհրաժեշտ է ներկայացնել վերջինիս անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձի այլ աշխատակցի դեպքում՝ իրավաբանական անձի գործադիր մարմնի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգով տրված լիազորագիրը:

բ) ֆիզիկական անձինք՝ դիմումին կից ներկայացնում են անձնագրի պատճենը և համապատասխան բնագավառի մասնագիտությանը տիրապետելու հանգամանքը հավաստող փաստաթղթի պատճենը (դիպլոմ, վկայական և այլն):

Մանրամասներին կարող եք ծանոթանալ Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի հ. 34-Ն որոշումից կամ զանգահարել ***57-56-58*** հեռախոսահամարով: